ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ РЕСПУБЛИКА АРМЕНИЯ REPUBLIC OF ARMENIA

ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ
ИНФОРМАЦИОННЫЙ ЖУРНАЛ НАЦИОНАЛЬНОЙ АССОЦИАЦИИ ПОТРЕБИТЕЛЕЙ
INFORMATION MAGAZINE OF NATIONAL ASSOCIATION OF CONSUMERS

# ՍՊԱՌՈՂ

ՍԿՍԱԾ
1997
թվականից

## ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 30 ՏԱՐԵԿԱՆ Է



## ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

Ձեր իրավունքների պաշտպանության երաշխավորը

# 3 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2021

# Grand Candy

**ՄԵՐ ՈՐԱԿԸ ՄԵՐ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ Է**

## ՍՊԱՌՈՂ
### *տեղեկատվական, վերլուծական, խորհրդատվական պարբերական*

**Հիմնադիր և հրատարակիչ՝**
ԱՆՆԱ Սպառողների ազգային ասոցիացիա

***ՄԵԼԻՏԱ ՀԱԿՈԲՅԱՆ***
Գլխավոր խմբագիր

***ՍԱՄՎԵԼ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ***
Գործադիր տնօրեն

***ՆԱՐԻՆԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ***
Խմբագիր

***ԼԻԱ ՕՍԻՊՅԱՆ***
Սննդամթերքի անվտանգության վերլուծության պատասխանատու, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

***ՌՈՒԲԵՆ ՀԱՅԹՅԱՆ***
Ասոցիացիայի փոխնախագահ, մարքեթինգի և մոնիթորինգային հետազոտությունների պատասխանատու, սննդի ապահովման ծառայությունների սերտիֆիկացման փորձագետ, սննդի որակի աուդիտոր

***ԼԵՎՈՆ ԱՃԵՄՅԱՆ***
Գյուղմթերքների որակի վերլուծության պատասխանատու, Կենսաբանական գիտությունների թեկնածու, Էկոլոգիայի միջազգային ակադեմիայի անդամ

***ԱՆՆԱ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ***
Ասոցիացիայի արտաքին և ներքին հարաբերությունների գծով փոխնախագահ, փորձագետ

***ՀԱՍՄԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ***
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ արտաքին և ներքին հարաբերությունների գծով փոխնախագահ, PR մասնագետ

***ՌՈԶԱԼԻԱ ԱՎԱՆԵՍՅԱՆ***
Լաբորատորիաների գծով փորձագետ, միս-մսամթերքի մասնագետ

***ՎԱՐԴՈՒՀԻ ՄԵԼԻՔՅԱՆ***
Ասոցիացիայի գլխավոր փորձագետ, Տնտեսագիտության թեկնածու

***ԱՍՏՂԻԿ ՓԵՓՈՅԱՆ***
Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Սննդագիտության և կենսատեխնոլոգիաների ԳՀԻ «Կենդանական ծագման հումքի և մթերքի վերամշակման տեխնոլոգիայի» ու «Սննդի անվտանգության և կենսատեխնոլոգիայի» բաժինների վարիչ, Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

***ԺԵՆՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***
Ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքների որակի վերլուծության պատասխանատու, Կենսաբանական գիտությունների թեկնածու

***ԱԻԴԱ ԻՍԿՈՅԱՆ***
Իրավախորհրդատու, ԵՊՀ Իրավաբանական ֆակուլտետի Քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր

***ԱՂԱՎՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ***Ը,
Լրագրող

***ԳԵՂԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ***
Դիզայներ

***ԱՐԵՎԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ***
Լուսանկարիչ

## ՍՊԱՌՈՂ
### *տեղեկատվական, վերլուծական, խորհրդատվական պարբերականի խմբագրական խորհուրդ*

***ՀԱՅՐԱՊԵՏ ԳԱԼՍՏՅԱՆ***
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

***ՎԻԼԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ***
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

***ՌՈՒԲԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***
ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար

***ԱՐՄԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ***
Բժիշկ-ճառագայթաբան,
Բժշկական գիտությունների դոկտոր

***ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ***
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

***ԵՐԵՄ ՉԱԽՈՅԱՆ***
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ նախագահության անդամ

***ԴԱՎԻԹ ՕՀԱՆՅԱՆ***
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ պատվավոր անդամ,
Տնտեսագիտության թեկնածու

***ԱՐՍԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ***
Հայաստանի Արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության նախագահ

***ՅՈՒՎԱՐԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ***
Հայաստանի վաճառականների միության նախագահ

***ԿԱՌԼԵՆ ԱԴԱՄՅԱՆ***
ՌԴ Չափագիտության ակադեմիայի ակադեմիկոս,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

***ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ պատվավոր անդամ

***ԿԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ***
Կենսաբանական գիտությունների թեկնածու

***ԴՈՐԱ ՍԱՔՈՒԼՅԱՆ***
Մոնրեալի Մաքգիլ համալսարանի դասախոս, դոկտոր, պրոֆեսոր

***ԻՐԻՆԱ ՎԻՆՈԳՐԱԴՈՎԱ***
Սպառողների ազգային ասոցիացիայի պատվավոր անդամ

# ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մեր երկրում սպառողական շարժումը թափ է առել 1990-ականների սկզբից՝ այն ժամանակ դեռ գոյություն չունեցող Սպառողների ազգային ասոցիացիայի ապագա հիմնադիրների ջանքերով, որոնց գերխնդիրը հայ սպառողի գիտակցությունը հօգուտ սեփական շահերի օրինական պաշտպանության բարձրացնելն էր:

Հայաստանի շրջափակման տարիներին ազգաբնակչությանը հնարավորինս պաշտպանելու նպատակով բժիշկ-համաճարակաբան, առաջատար դասախոս Մելիտա Հակոբյանը սկզբունքային որոշում կայացրեց՝ մերժելով այդ պահին արտերկրից ստացած աշխատանքային բոլոր հրավերները և գերադասելով աշխատանքը հանուն հայրենիքի բարօրության և հայ ժողովրդի առողջ ու բարեկեցիկ ապագայի: Հիշենք, որ այդ տարիներին սպառվում էր այն, ինչ ներկրվում էր համարյա առանց վերահսկողության՝ այրվող թխվածքաբլիթներ, հյութի վերածվող անհայտ ծագման փոշիներ, հաճախ պիտանիության ժամկետն անցած սննդամթերք: Հենց այս ժամանակ մի խումբ համախոհների հիմնախնդիրներից դարձան սպառողների առողջությունն ու անվտանգությունը: Նախապես ուսումնասիրվեցին արտասահմանյան երկրների փորձը, գործող օրենքները, ինչի արդյունքում 1993 թ. Վաճառականների միությունում, որի փոխնախագահը Մելիտա Հակոբյանն էր, հիմնադրվեց Սպառողների իրավունքների և շահերի պաշտպանության ծառայություն: Վաճառականների միությունը հրատարակում էր «Զարկերակ» շաբաթաթերթը, որի մեկ էջը կրում էր «Սպառողը շուկայի թագավորն է» խորագիրը և պարբերաբար անդրադառնում էր սպառողների իրավունքներին և շահերին վերաբերող հարցերին:

1995 թ. հիմնադրվեց «Աննա» կին սպառողի շահերի պաշտպանության միությունը, որի նպատակն էր.

- պաշտպանել սպառողների շահերը տնտեսության բոլոր բնագավառներում,
- ներկայացնել սպառողների շահերը պետական կառույցներում,
- վերլուծության ենթարկել երկրում գործող օրենսդրության և սպառողի շահերին վերաբերող օրենքները, օրենսդրական ակտերն ու որոշումները, մշակել ու համապատասխան առաջարկներ ներկայացնել դրանց կատարելագործման ուղղությամբ,
- իրականացնել ապրանքների և ծառայությունների անկախ փորձաքննություն,
- առաջարկներ ներկայացնել իշխանություններին անորակ ապրանքներն ու ծառայությունները շրջանառությունից դուրս բերելուն ուղղված միջոցներ ձեռք առնելու ուղղությամբ,

# 30 ՏԱՐԵԿԱՆ Է

- աջակցել հայրենական որակյալ արտադրողներին և ծառայություն մատուցողներին,
- բարձրացնել սպառողների գիտակցությունը, կրթել՝ հնարավորություն ընձեռելով ճիշտ կողմնորոշվելու և ապրանքների ու ծառայությունների շուկայում սեփական շահերը պաշտպանելու,
- պայքարել հանուն ազգաբնակչության առողջության պահպանման և առողջ սերնդի ձևավորման,
- ՋԼՄ-ների միջոցով սպառողներին պարբերաբար ապահովել համապատասխան տեղեկատվությամբ:

1996 թ. «Աննա» կին սպառողի շահերի պաշտպանության միությունը ստեղծեց «Հասմիկ» դուստր ձեռնարկությունը, որը հետագայում վերանվանվեց «Հասմիկ ՄԱՍ» ՍՊԸ:

1999 թ.-ից «Աննա» կին սպառողի շահերի պաշտպանության միությունը վերանվանվեց՝ դառնալով «Աննա» սպառողների ազգային ասոցիացիա, որը մշտապես ամենահզորն է ճանաչվել տարածաշրջանում թե՛ գիտական ներուժով, թե՛ գործունեության ծավալներով: Ասոցիացիայի կազմում ընդգրկված են ակադեմիկոսներ, դոկտոր-պրոֆեսորներ, գիտությունների թեկնածուներ, բժիշկներ, մանկավարժներ, լրագրողներ և այլ մասնագետներ: Ի դեպ, Ասոցիացիային անդամագրվում են կամավորության սկզբունքով:

2001 թ. ստեղծվել է Ծառայությունների սերտիֆիկացման մարմին, որը նպատակ ուներ հոգալու Սպառողների ազգային ասոցիացիայի ֆինանսական խնդիրները՝ մարքեթինգ-մոնիթորինգային հետազոտությունների իրականացում, «Սպառող» ամսագրի հրատարակում և տպագրական այլ ծախսեր, մարզային այցելություններ, մասնակցություն սեմինարների, կոնֆերանսների և այլն: Հիշյալ կառույցը գործել է մինչև 2016 թվականը:

2003 թ. Ասոցիացիան հիմնադրել է Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա Իրավաբանական անձանց միությունը, որտեղ միևնույն նպատակի շուրջ, այն է՝ սպառողական ինստիտուտի վերջնական կայացումը մեր երկրում, միավորվել են մի խումբ հասարակական կառույցներ: Ակադեմիան իրականացնում է «50 լավագույն արտադրողներ» ծրագիրը, որը նույնպես ուղղված է տեղական արտադրության խթանմանը մեր երկրում:

«Աննա» սպառողների ազգային ասոցիացիան բոլոր մարզերում ունի մարզային կառույցներ իրենց մասնաճյուղերով: Դրանցից մի քանիսն աշխատանքում հմտանալով վերագրանցվել և գործում են իբրև ինքնուրույն կառույցներ, որոնք այժմ Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա Իրավաբանական անձանց միության կազմում են:

## ԱՆԴԱՄԱԿՑՈՒՄ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻՆ (Consumers international, CI)

1998 թ.-ից Հայաստանը, ի դեմս «Աննա» կին սպառողի շահերի պաշտպանության միության, անդամակցում է Սպառողների միջազգային ասոցիացիային և համագործակցում CI-ի անդամ գրեթե բոլոր կառույցների հետ: 1999 թ. Միությունն անվանափոխվելուց հետո CI-ում հաստատվել է նոր՝ «Աննա» Սպառողների ազգային ասոցիացիա անունով:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սպառողների ազգային ասոցիացիայի մասնագետները պարբերաբար ներկայացրել են Հայաստանը տարբեր երկրներում, մի շարք միջազգային վեհաժողովներում, օրինակ.

1. 16-րդ միջազգային վեհաժողով «Սնուցումը գիտականից գործնականի վերածելու անհրաժեշտությունը հանուն առողջության բարելավման» թեմայով (1997, Կանադա, Մոնրեալ, Հայաստանը ներկայացրել է «Աննա» կին սպառողի շահերի պաշտպանության միության նախագահ Մելիտա Հակոբյանը):

2. «Քաղաքակիրթ հասարակության զարգացում» միջազգային ծրագիր (2000, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Հայաստանը ներկայացրել է «Աննա» կին սպառողի շահերի պաշտպանության միության նախագահ Մելիտա Հակոբյանը):

3. Վեհաժողով նվիրված Սպառողների միջազգային ասոցիացիայի հիմնադրման 40-ամյակին (2000, Պորտուգալիա, Լիսաբոն):

4. ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) վեհաժողով (2002, Իտալիա, Հռոմ, Հայաստանը ներկայացրել են Սպառողների ազգային ասոցիացիայի նախագահ Մելիտա Հակոբյանը և փոխնախագահ Հասմիկ Նահապետյանը):

5. «Սպառողների վիճակը տարբեր երկրներում» թեմայով կոնֆերանս (2006, Ֆրանսիա, Ստրասբուրգ, Հայաստանը ներկայացրել է Սպառողների ազգային ասոցիացիայի արտաքին հարաբերությունների գծով փոխնախագահ Հասմիկ Նահապետյանը):

6. «Սպառողների վիճակը տարբեր երկրներում» թեմայով կոնֆերանս (2006, Ֆրանսիա, Ստրասբուրգ, Հայաստանը ներկայացրել է Սպառողների ազգային ասոցիացիայի արտաքին հարաբերությունների գծով փոխնախագահ Հասմիկ Նահապետյանը):

7. «Զարգացող երկրներում սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտի խնդիրներին առնչվող փորձի փոխանակում» խորագրով միջազգային սեմինար (2007, Լիտվա, Վիլնյուս, Հայաստանը ներկայացնող մասնագետների շարքում էր Սպառողների ազգային ասոցիացիայի արտաքին հարաբերությունների գծով փոխնախագահ Հասմիկ Նահապետյանը):

8. «Հայաստանում սննդամթերքի անվտանգությունն ապահովող միջոցների բարելավումը» ծրագիր (2008, Լիտվա, Հայաստանը ներկայացրել է Սպառողների ազգային ասոցիացիայի նախագահ Մելիտա Հակոբյանը):

9. «Կլիմայի փոփոխությունները» խորագրով միջազգային կոնֆերանս (2008, Հարավային Կորեա, Սեուլ, Հայաստանը ներկայացրել են Սպառողների ազգային ասոցիացիայի արտաքին և ներքին կապերի գծով փոխնախագահ Աննա Նահապետյանը և Ստանդարտների ազգային ինստիտուտի Միջազգային և Եվրոպական ստանդարտների բաժնի առաջատար մասնագետ Արմինե Սարգսյանը):

10. Աշխատաժողով կենսապահովության թեմայով (2008, Ինդոնեզիա, Ջակարտա, Հայաստանը ներկայացրել է Սպառողների ազգային ասոցիացիայի արտաքին և ներքին հարաբերությունների գծով փոխնախագահ Աննա Նահապետյանը):

11. Սպառողների միջազգային կազմակերպության և Հոնկոնգի սպառողական խորհրդի կողմից կազմակերպված 19-րդ համաշխարհային վեհաժողով (2011, Հոնկոնգ, Հայաստանը ներկայացրել է Սպառողների ազգային ասոցիացիայի արտաքին և ներքին կապերի գծով փոխնախագահ Աննա Նահապետյանը):

12. Սպառողների համաշխարհային 20-րդ վեհաժողով (2015, Բրազիլիա, Հայաստանը ներկայացրել են Սպառողների ազգային ասոցիացիայի արտաքին և ներքին կապերի գծով փոխնախագահ Աննա Նահապետյանը):

13. Տաջիկստանի պատվիրակության այցը Հայաստան (2016):

14. Ֆորում ջրային սանիտարիայի և հիգիենայի ոլորտում Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի (ECA-ի) սոցիալական պատասխանատվությունը թեմայով (2017, Դուշանբե, Տաջիկստան, Հայաստանը ներկայացրել է Սպառողների ազգային ասոցիացիայի արտաքին հարաբերությունների գծով փոխնախագահ Հասմիկ Նահապետյանը):

15. Գործունեության բոլոր տարիներին Սպառողների ազգային ասոցիացիայի նախագահն ու առաջատար մասնագետներն այցեր են կատարել Վրաստանի Հանրապետություն, մասնակցել տեղական ու միջազգային կլոր սեղաններին, սպառողական ոլորտին առնչվող հիմնախնդիրների քննարկումներին:
16. Սպառողների ասոցիացիայի հարկի տակ պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ միջազգային կառույցների նախագահների ու բազմապրոֆիլ մասնագետների հետ:

## ԿԱՊ ՍՊԱՌՈՂԻ ՀԵՏ

1. 1997 թ.-ից մինչև օրս Սպառողների ազգային ասոցիացիան հրատարակում է տարածաշրջանում իր տեսակի մեջ առաջին և եզակի «Սպառող» տեղեկատվական, վերլուծական, խորհրդատվական ամսագիրը:
2. Բնակչության սպառողական գիտակցության բարձրացման նպատակով պարբերաբար տասնյակ հազարավոր օրինակներով հրապարակվում և ազգաբնակչության շրջանում բաժանվում են տեղեկատվական թերթիկներ, թերթոններ (բուկլետներ) և բրուշյուրներ, օրենքների նախագծերի կրկնօրինակներ:
3. Ասոցիացիայի կողմից հրատարակվել է «Սպառողների իրավունքների հիմունքները» դասագիրքը՝ հանրակրթական դպրոցների համար:
4. 2009 թ. ստեղծվել և առայսօր գործում է Սպառողների ազգային ասոցիացիայի պաշտոնական կայքը (www.armconsumer.am):

5. Գործում է թեժ հեռախոսահամար (010) 24 92 04:
6. 2003 թ.-ից շուրջ հինգ տարի «Երևան» հեռուստաընկերության եթերում պարբերաբար հեռարձակվել է ՍՊԱՌՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ հաղորդաշարը:

## ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

1. 1990-ականներ: Հենց այս շրջանում սկսվեց համագործակցությունը Պետստանդարտի հետ, և դաշտը կարծես որոշ չափով կարգավորվեց: Սպառողի վիճակը թեթևացավ այնքանով, որ, թեև արտադրություն իրականացնելու համար ոչ այնքան հարմար, սանիտարական նորմերին չհամապատասխանող տնային պայմաններում հին սարքավորումներով սկսվեց արտադրվել մսամթերք, կաթնամթերք, պաղպաղակ, հացամթերք, քաղցրավենիք և այլն: Շուկան ինչ-որ չափով վերահսկելի դարձավ:
2. Գործունեության ընթացքում Ասոցիացիայի մասնագետները բազմիցս մասնակցել են տարբեր օրենքների մշակումներին, լրամշակումներին և ԱԺ-ում քննարկումներին: Մասնավորապես այդ օրենքներից են

- ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԸ (այս օրենքի նախագիծը մշակվել է ՀՀ վաստակավոր իրավաբան, Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանի Դաշնության հումանիտար գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Գեղամ Ղարախանյանի և Սպառողների ազգային ասոցիացիայի մասնագետների նախաձեռնությամբ ու մասնակցությամբ),
- ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԸ,
- ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԸ,
- ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԸ,
- ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԸ,
- ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԸ,
- ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԸ և այլն:

3. 1998, «Յուսիս» ծրագիր: Այս ծրագրի շրջանակներում Սպառողների ազգային ասոցիացիան ստացավ գրասենյակային տեխնիկա՝ համակարգիչ, տպիչ և այլն, ինչը բավականին թեթևացրեց Ասոցիացիայի տպագրական աշխատանքները:

4. 1997 թ.-ից սկսած՝ Ասոցիացիայի կողմից ՀՀ բոլոր մարզերում ստեղծվել են մասնաճյուղեր, ապա՝ մարզային կառույցներ իրենց մասնաճյուղերով:
5. 1999, Քարոզարշավ հանրապետության ողջ տարածքում: Քարոզարշավը նպատակ ուներ խրախուսելու հասարակությանը մասնակցելու «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքի նախագծի քննարկումներին, հանդես գալու սեփական առաջարկներով ու նախաձեռնություններով, բարձրացնելու սպառողների իրազեկվածությունը սպառողների շահերի պաշտպանությունն ապահովող կանոնակարգերի մասին՝ նպաստելով Հայաստանում քաղաքակիրթ շուկայի ձևավորմանը: Օրենքն ընդունվել է 2001-ի հունիսի 6-ին, ԱԺ արտահերթ նիստում, ուժի մեջ մտել 2002-ի հունվարի 1-ից:

6. 2000-2001, Ավտոմատացված տեղեկատվական համակարգի ստեղծում: Այս ծրագիրն իրականացվել է Ասոցիացիայի և հրավիրված մասնագետների ջանքերով: Օգտագործվել են Հայաստանի ՀՍՏ-ները, ԳՕՍՏ-երը, ԻՍՕ-ի և եվրոպական ստանդարտները, Սան-Պին-ները:
7. 2001-2002, Քարոզարշավ՝ նվիրված «Հիվանդի իրավունքների պաշտպանության մասին» օրենքի նախագծի քննարկմանը:
8. 2008, Այցելություն Սյունիքի մարզ: Նպատակը՝ մարզային բնակչության շրջանում սպառողական գիտակցության սերմանում:

9. 2009, 2010, 2015, ՊԱՅՔԱՐ ԱՐԱԳ ՍՆՆԴԻ ԴԵՄ: Նպատակը՝ իրազեկել ՀՀ բնակչությանն արագ սննդի բացասական ազդեցության և հնարավոր վտանգների մասին:

10. Հայաստանի Հանրապետությունում միջազգային չափանիշերին համապատասխան՝ սպառողների շահերի պաշտպանության համակարգ ապահովելու հայեցակարգ:
11. 2014-2015 Պայքար ցորենի ալյուրի երկաթով ու ֆոլաթթվով հարստացման դեմ:

12. 2017-2019, Հայաստանն առանց ծխախոտի: Նպատակը՝ ծխախոտի մասին օրենքի ընդունում:



13. 2018, Էկոհամակարգային ծառայություններ: Նպատակը՝ պաշտպանել էկոհամակարգային ծառայությունների սպառողների իրավունքները՝ կանխարգելելով հողերի դեգրադացիան և բարձրացնելով արոտավայրերի հասանելիությունը:
14. 2019, Ձևավորում ենք քաղաքակիրթ սպառողների սերունդ: Այս ծրագրի շրջանակում Սպառողների ազգային ասոցիացիայի կողմից հրատարակվեցին ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ ուսումնական ձեռնարկն ու ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ առարկայի մեթոդական ուղեցույցը:

## ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1. Հանդիսություն նվիրված Հայաստանում սպառողական շարժման 5-ամյակին (1996, Գիտությունների ազգային ակադեմիայի կլոր դահլիճ):
2. Հանդիսություն նվիրված Հայաստանում սպառողական շարժման 10-ամյակին (2001, Գիտությունների ազգային ակադեմիայի կլոր դահլիճ):
3. Հանդիսություն նվիրված Հայաստանում սպառողական շարժման 15-ամյակին (2006, Գիտությունների ազգային ակադեմիայի կլոր դահլիճ):

4. Հանդիսություն նվիրված Հայաստանում սպառողական շարժման 20-ամյակին (2011, «Էրեբունի պլազա» Բիզնես կենտրոն):
5. Հանդիսություն նվիրված Հայաստանում սպառողական շարժման 25-ամյակին (2016, ԴԱԲԼԹՐԻ ԲԱՅ ՀԻԼԹՆ ԵՐԵՎԱՆ ՍԻԹԻ ՍԵՆԹՐ հյուրանոց):
6. Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության (Consumers International) 10-ամյա համագործակցություն (2008, Անի Պլազա հյուրանոց):

7. Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության (Consumers International) 20-ամյա համագործակցություն (2019, Արամ Խաչատրյան մեծ համերգասրահ):

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մեր կառույցում կարևորվում են համագործակցությունները ոչ միայն հայրենական արտադրողների, այլև սպասարկում և ծառայություններ իրականացնող կազմակերպությունների հետ, ինչից շահում է միայն սպառողը:

Ասոցիացիան սերտորեն համագործակցում է ՀՀ Էկոնոմիկայի, Գյուղատնտեսության և այլ նախարարությունների, ինչպես նաև Էկոնոմիկայի նախարարության Ստանդարտների ազգային ինստիտուտի հետ: Սպառողների ազգային ասոցիացիայի և Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ նախագահը և Ասոցիացիայի անդամներից շատերը Կառավարության, Ազգային ժողովի և այլ պետական ու ոչ պետական կառույցների խորհուրդների անդամներ են:

Ուշադրության արժանի է համագործակցությունը հայրենի Կառավարության, Ազգային ժողովի, ինչպես նաև քաղաքապետարանների և մարզպետարանների հետ, որոնց առանձին հանձնաժողովների աշխատանքներում մշտապես ներգրավվում են Ասոցիացիայի մասնագետները՝ մասնակցելով բազմաթիվ օրենքների և օրինագծերի մշակման ու լրամշակման աշխատանքներին: Սպառողների ազգային ասոցիացիայի մասնագետների կարծիքը հաշվի է առնվում նաև ՀՀ Կառավարությունում սպառողների իրավունքներին առնչվող որոշումների ընդունման ժամանակ:

# 2021 Թ. ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԱՅԻՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Սպառողների ազգային ասոցիացիայի «50 լավագույն արտադրողներ» ծրագրի շրջանակում 2021 թ. երրորդ եռամսյակում կատարված ուսումնասիրությունները դարձյալ վերաբերում են հացաբուլկեղենի, ալրային և շաքարային հրուշակեղենի, կաթնամթերքի, հյութերի և ըմպելիքների, պաղպաղակի, մսամթերքի, թռչնամսի և ձվի, ոգելից և ոչ ոգելից խմիչքների, խոհարարական կիսապատրաստվածքների, հանրային սննդի, նաև բուսական և կենդանական յուղերի արտադրման և իրացման ոլորտներին:

Այս եռամսյակ ուսումնասիրվել են մոտ 300 մեծ ու փոքր առևտրային կազմակերպություն, մոտ 20 սննդի արտադրական ձեռնարկություն և հանրային սննդի մոտ 50 կետ:

Ի տարբերություն նախորդ եռամսյակների՝ այս անգամ մոնիթորինգային աշխատանքներ կատարվել են նաև հանգստի գոտիներում (Ջերմուկ, Սևան, Ծաղկաձոր)՝ տեղում ծանոթանալու համար սպառողներին հանրային սննդով ապահովելու գործընթացին:

Ուրախությամբ փաստենք, որ Սպառողների ազգային ասոցիացիայի երկար տարիների աշխատանքն ապրանքների և ծառայությունների շուկայում ճիշտ ընտրություն կատարելու հարցում դրական արդյունք է գրանցում, քանի որ օր-օրի իրազեկ սպառողների թիվն աճում է:

## ՀԱՑԱԲՈՒԼԿԵՂԵՆԻ, ԱԼՐԱՅԻՆ ԵՎ ՇԱՔԱՐԱՅԻՆ ՀՐՈՒՇԱԿԵՂԵՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս ոլորտում դանդաղ, բայց կայուն աճ է գրանցվում՝ կապված հացամթերքի ճիշտ մակնշման, փաթեթավորման և տեղափոխման հետ (իրացվող հացի գրեթե քառորդը): Թեև այսօր էլ կան թերացումներ, ինչի հետևանքով սպառողը չգիտի, թե ինչ տեսակի, քաշի կամ որակի հացի դիմաց է վճարում: Այս հարցերի պատասխանները երբեմն չգիտի նաև վաճառողը: Այս և հատկապես փողոցային առևտրին առնչվող հարցերը մեր կողմից մշտապես բարձրաձայնվում են, սակայն առաջընթացը ոլորտում դեռևս շոշափելի չէ:

Հայկական երկու հեռուստաընկերությունների հետ Սպառողների ազգային ասոցիացիան կատարել է ստուգայցեր և դարձյալ բացահայտել է փողոցում, բնականաբար ոչ սանիտարահիգիենիկ պայմաններում իրացվող հացի վաճառքի դեպքեր, երբ հացը շարվում է մայթին դրված արկղին ու իբր մաքուր պահելու համար ծածկվում պոլիէթիլենային թաղանթով, որի ազդեցությունը հացամթերքի վրա արևի ջերմությունից առավել վտանգավոր է դառնում: Խոսքը մասնավորապես Գ. Նժդեհի հրապարակին կից և Մալաթիա կրպակաշարի հարևանությամբ բացօթյա իրացվող հացի մասին է:

Հացաբուլկեղենի ոլորտում ռիսկային է նաև կասկածելի որակի կայունացուցիչների, բարելավիչների, փխրեցուցիչների, վիտամինների, գունանյութերի և այլ հավելանյութերի օգտագործումը, առավել ևս, որ հիմնականում չի պահպանվում դրանց օգտագործման ճիշտ չափաբաժինը: Նման հացաբուլկեղեն իրացվում է հիմնականում «Տաք հաց» անվանումով փուռխանութներում, որտեղ հավանաբար տեղյակ չեն, որ հացը պետք է իրացվի փռից հանելուց և փայտե դարակներում 3-5 ժամ մնալուց հետո միայն: Փաստենք, սակայն, որ հիշյալ թերություններով աշխատում են նաև «Գեղամ Մուրադյան», «Հեկտոր Մանվելյան», «Միրաժ», «Ալվարդ Մարգարյան», «Վարդան և Մոնիկա», «Էդուարդ Մինասյան», «Նիկոլայ Մելքոնյան», «Արմեն Հովհաննիսյան», «Վարազդատ Մանուկյան», «Տորթեր Մարինայից», «Էմ ընդ Կա», «Արմինաշող», «Կեսգիշեր», «Նրբիկ թրեյդ», «Արթուր Այվազյան», «Արարատ Կիրակոսյան», «Անահիտ Հակոբյան» և այլ ընկերություններ:

## ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Գրանդ Քենդի» ընկերությունը շաքարային և ալրային հրուշակեղենի արտադրության ոլորտում մշտական առաջատար է: Նա տարածաշրջանում շոկոլադի հումք կակաո ռունդերի ներկրողն է:

«Գրանդ Քենդի» ընկերության տեսականին բազմազան է և ներառում է ավելի քան 400 անուն արտադրատեսակ, այդ թվում՝ սերուցքային, շոկոլադե, մրգային և այլ բնական հավելումներով պաղպաղակներ: Մեծ պահանջարկ ունեն հատուկ տոնական միջոցառումների համար նախատեսված պաղպաղակե տորթերը:

Հայկական շուկայում լավագույնն են «Գրանդ Քենդիի» կարամելի տեսականին (սառնաշաքարային, մրգային, կաթնային, ընկուզային, շոկոլադապատ և այլն), դրաժեի տեսականին (շոկոլադապատ և շաքարային ջնարակով պատված), շոկոլադե ջնարակով պատված մրգերի չրերը, պրալինե, վաֆլե և կրեմային շոկոլադե կոնֆետները, կոնֆետների ընտրանին, շոկոլադե սալիկները՝ պատրաստված բարձրորակ կակաո-հումքից և բնական զանազան հավելումներից, դառը շոկոլադե սալիկների տեսականին՝ 60, 70 և 80 տոկոս կակաո մթերքի պարունակությամբ:

«Գրանդ Քենդիի» խմորեղենների տեսականին ներառում է մրգային, մեղրային, ընկուզային և շոկոլադե հավելումներով ավանդական տորթեր, քաշային և հատային խմորեղեն: Արտադրման ընթացքում օգտագործվում է բացառապես բնական թարմ հումք՝ սերուցքային կարագ, բարձրորակ ալյուր, հատընտիր ընկուզեղեն, թարմ հավկիթ, մեղր, թարմ մրգեր, բնական շոկոլադ, կակաո փոշի և այլն: Հատուկ հանդիսությունների համար առաջարկվում են «Ֆուրշեթ» հավաքածուները:

Ժամանակակից տեխնոլոգիաներով և իտալական սարքավորումներով հագեցած արտադրամասում արտադրվում է սուրճ, որի համար, որպես հումք, օգտագործվում են արաբիկա և ռոբուստա սուրճերի ամենաբարձրորակ տեսակները: Ընկերությունն արտադրում է նաև սառը սուրճ և 3 տեսակի սառը թեյ՝ դասական սև, կիտրոնով և դեղձի համով:

«Գրանդ Քենդիի» արտադրությունը սերտիֆիկացված է ISO 9001:2015 որակի կառավարման և ISO 22000:2005 սննդի անվտանգության կառավարման չափանիշերով: Ընկերության արտադրանքի առավելությունն ու բարձր որակի գրավականը բացառապես բնական

հումքն է: Այն մանրազնին ստուգման է ենթարկվում նրա կենտրոնական լաբորատորիայում, որը հավաստագրված է ՀՍ ISO 17025:2005 ստանդարտի համաձայն: 2019 թ. ընկերությունը սերտիֆիկատ է ստացել նաև սննդի արտադրանքի անվտանգության կառավարման FSSC 22000V4.1. ստանդարտներին համապատասխան:

«Գրանդ Քենդին» լայնորեն սպառվում է սեփական առաքման մանրամեծածախ ցանցի միջոցով արտադրանքն առաքելով հանրապետության 7500 առևտրի կետեր: Գործում է 22 ֆիրմային խանութ, ինչի շնորհիվ ընկերության արտադրանքը միշտ թարմ է հասնում սպառողին:

## ԿԱԹ-ԿԱԹՆԱՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս ոլորտում Սպառողների ազգային ասոցիացիայի մասնագետների կատարած մշտադիտարկման արդյունքներով լավագույն տասնյակում կայուն տեղ են զբաղեցնում հետևյալ ընկերությունները.

- Աշտարակ-Կաթ ապրանքանիշ,
- Չանախ:

Այս ոլորտում լավագույնների շարքից դուրս է մնացել ոլորտի առաջատար ընկերություններից մեկը, որը մեր բազմաթիվ հորդորներն անտեսելու հետևանքով արտադրանքի որակով (կաթնամթերք, պաղպաղակ, ալրային հրուշակեղեն) զիջել է մրցակիցներին: Ընկերության գործունեությանն առավել մանրամասն կանդրադառնանք ավելի ուշ:

## ՄՍԱՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս ոլորտը համարվում է համեմատաբար կայուն, քանի որ բոլոր մոտ 4 տասնյակ արտադրողներն էլ օգտագործում են նույն հումքն ու բաղադրիչները և բարեխիղճ տեխնոլոգիական գործընթաց իրականացնելու դեպքում (հումքի ջլազատում, ջերմային մշակման ռեժիմի պահպանում, բաղադրիչների, հատկապես համեմունքների չափավոր օգտագործում, հավելանյութերի և կայունացուցիչների սահմանված կարգով կիրառում) ունենում են որակյալ արտադրանք:

Երրորդ եռամսյակում լավագույն տասնյակում շարունակում են կայուն տեղ զբաղեցնել հետևյալ ընկերությունները.

- **ԲԱՐԻ ՍԱՄԱՐԱՑԻ,**
- **ԱԹԵՆՔ,**
- **ԲԵԿՈՆ ՊՐՈԴՈՒԿՏ,**

- **ՑԱՐԻՑԻՆՈ**
  (Царский продукт **ապրանքանիշ),**
- **ԱՌԴԵԼԻԿԱՏԵՍ,**
- **«ԱՐՄ ՄԻԹ»**
  **(«Արմենիա մսամթերք» ապրանքանիշ),**
- **ԲԱԲԻԿ 90**
  **(«Դի Ջի Միթ Ֆուդ» ապրանքանիշ),**
- **ԼՈՒՄԱ:**

«50 լավագույն արտադրողներ» ծրագրի շրջանակում իրականացվող ուսումնասիրությունները վկայում են, որ շարունակվում է իրացվել ոչ բավարար որակի մսամթերք, որը չի համապատասխանում նորմատիվ պահանջներին: Օրինակ՝ «Շիրվանյան և ընկերներ», «Կարինե-Նարինե», «Սոս» և այլ ընկերություններում ոչ պատշաճ սանիտարական վիճակ է, անձնակազմի բուժզննում չի կատարվում և այլն, իրենց հիմնականում ոչ բարձր որակի արտադրանքն իրացնում են հեռավոր մարզերում՝ օգտվելով սպառողների սակավ իրազեկվածությունից:

## ՊԱՂՊԱՂԱԿԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այս արտադրատեսակի վաճառքը կարծես թե այլևս սեզոնային բնույթ չի կրում, հետևաբար դրա արտադրման ծավալները բավականին աճել են, սակայն ցավով պիտի փաստենք, որ աճել են ի հաշիվ որակի:

Սպառողների ազգային ասոցիացիան այս օգոստոսից սկսել է արտադրման ու իրացման վերլուծություններ կատարել օրենքով սահմանված բոլոր կարգերի շրջանակներում: Վերլուծության առաջին փուլն ավարտված է: Սպառողներին հստակ կողմնորոշիչ տեղեկատվություն կտրվի ավելի ուշ:

Հայկական սպառողական շուկայում հատկապես ամռան ամիսներին պաղպաղակի ոլորտում լավագույն արտադրողների շարքում են.

- **Գրանդ Քենդին,**
- **Pink Berry-ն,**
- **Աշտարակ-Կաթ ապրանքանիշը:**

## ՓԻՆՔ ԲԵՐՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Փինք Բերրին», որ գործում է 2013-ից, մեծ ճանաչում ձեռք բերեց և հիմնադրման պահից գրավեց լցնովի պաղպաղակի շուկան իր գերազանց, նուրբ համով և բարձրակարգ սպասարկմամբ: Ընկերությունն առաջարկում է շուրջ 25 տեսակ բացառապես բարձր հումքով հատով պաղպաղակներ, որոնք պարբերաբար համալրվում են նոր տեսակներով:

Կարճ ժամանակահատվածում ընկերությանը հաջողվեց դառնալ պաղպաղակի շուկայի առաջատարներից մեկը Հայաստանում: Բնական, անարատ հումք, բարձրակարգ տեխնոլոգիաներ, իտալական ժամանակակից սարքավորումներ և յուրահատուկ փաթեթավորում, արդյունքում՝ միջազգային ստանդարտներին համապատասխան արտադրանք: Արտադրության մեջ ներգրավված բարձր որակավորում ունեցող մասնագետներն ապահովում են պաղպաղակի կատարյալ համը:

«Փինք Բերրիի» առաքելությունն է պարգևել քաղցրություն, դրական էմոցիաներ ու ժպիտներ: «Փինք Բերրի» ընկերությունը մշտապես մեր ազգի կողքին է և ուժերի ներածին չափով փորձում է զարգացնել երկրի տնտեսությունը:

**«Փինք Բերրի»: Վայելիր ice պահը...**

## ՍԱՆՖՈՒԴ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Սանֆուդ» ընկերությունը ստեղծվել է 2009 թ.: Կարճ ժամանակահատվածում դարձել է Հայաստանի բուսայուղային բնագավառի առաջատարը հալած յուղերի (խառնուրդների) շուկայում:

«Սանֆուդն» իր սպառողներին առաջարկում է միայն բարձրորակ, և համեղ մթերքներ: Ընկերության պրոֆեսիոնալ մասնագետները հստակ գիտակցում են, որ առաջարկի մշտական աճի պայմաններում ներքին և արտաքին սպառողական շուկաներում սպառողների վստահությունը կարելի է ձեռք բերել միայն արտադրանքի անվտանգության բարձր ստանդարտների, նաև որակի համապատասխանության պայմաններում:

«Սանֆուդ» ընկերությունն արտադրության մեջ ներդնում է ժամանակակից, արդիական և գիտական ծավալուն տեխ-

նոլոգիաներ, ձգտում արտադրության ընդլայնմանը: Նա շուկայում ներկայանում է Իմպերիա վկուսա, Ցարսկայա, Մասելկո, Սոնյաչնա Դոլինա, Ֆավորիտ ապրանքանիշերով՝ արտադրանքն արտահանելով Ռուսաստան, ԱՄՆ, Վրաստան, Ղազախստան:

Գործունեության մի քանի տարիների ընթացքում «Սանֆուդ» ընկերությունը հասցրել է նաև մասնակցել EXPO-ների և ցուցահանդեսների՝ նվաճելով բազմաթիվ ոսկե և արծաթե մեդալներ:

BSI բրիտանական ընկերության կողմից անցկացվել է աուդիտ, և «Սանֆուդ» ընկերությունը ստացել է ISO 22000, որը պահանջներ է սահմանում սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգի համար:

## ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ոլորտի լավագույն տասնյակում շարունակում են կայուն տեղ զբաղեցնել «Շամպայն գինիների գործարանը» և «Պռոշյանի կոնյակի գործարանը»:

### ՇԱՄՊԱՅՆ ԳԻՆԻՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Երևանի շամպայն գինիների գործարանը վաղուց դարձել է ազգային ապրանքանիշ: Այստեղ արտադրվում են շամպայն գինիների ողջ տեսականին ֆրանսիական տեխնոլոգիայով՝ դասականից մինչև հավաքածու, նաև 3-15 տարվա հնացման կոնյակներ:

Գործարանի արտադրանքը սերտիֆիկացված է: Տեսականին ներառում է.

- շամպայն (Հայկական շամպայն չոր, Հայկական շամպայն կիսաչոր, Հայկական շամպայն կիսաքաղցր, Կարմիր խաղուն գինի «Տիգրան Մեծ», Հայկական շամպայն կոլեկցիոն Բրյուտ, Հայկական շամպայն Կոլեկցիոն կիսաչոր),
- մրգապտղային սեղանի կիսաքաղցր գինիներ (Նռան գինի, Մոշի գինի, Բալի գինի, Ազնվամորու գինի, Ելակի գինի, Սև հաղարջ, Միկադո (Սալորի կիսաքաղցր գինի),
- խաղողի գինիներ (Ֆրանս, Վայք Արենի, Նվարդ, Հարսանեկան, Հողի արյուն, Հայկ Նահապետ (Կարմիր կիսաքաղցր և Սպիտակ կիսաչոր), Վերածնունդ, Սպիտակ քիշմիշ կիսաքաղցր, Սև քիշմիշ կիսաքաղցր),
- կոնյակներ օրդինար և տեսակավոր (Ֆրանս 3, 5, 7, 10, 15 տարիների հնության, Մենուա 3 տարեկան, Տրդատ 5 տարեկան, Гордость Армении 3, 5, 7, 10 տարիների հնացմամբ, Նարե 6, 10, 15 տարիների հնացմամբ):

Համի և որակի գաղտնիքը պայմանավորված է միջազգային չափանիշերին համապատասխան արտադրության տեխնոլոգիայով, որակի հսկման լաբորատորիայով, նաև բարձր որակավորում ունեցող մասնագետներով: Գինու արտադրության համար ընտրվում են ՀՀ տարբեր շրջաններում աճեցվող խաղողի լավագույն տեսակները:

## ՊՌՈՇՅԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Պռոշյանի կոնյակի գործարանի տեսականին բարձրորակ է, գեղեցիկ, համեղ, ինչն արդյունքն է պարբերաբար ներդրվող նորագույն տեխնիկական միջոցների, հմուտ և փորձառու մասնագետների աշխատանքի:

Գործարանում արտադրվում են.

- 3-30 տարվա հնության հայկական կոնյակներ (Մանե, Պապ թագավոր, Շիրազ, Չարենց, Արծրունի, Արփինե, Վարդան Մամիկոնյան, Արմենուհի, Խենթ և այլն)՝ պատրաստված Արարատյան դաշտի խաղողի լավագույն տեսակներից,
- լիկյորներ ու նորագույն տեխնոլոգիաներով արտադրված լավագույն մրգային՝ նռան, սալորի, սև հաղարջի, բալի, ծիրանի, սերկևիլի, մոշի գինիներ:

Գործարանի բարձրորակ արտադրանքն իրացվում է Հայաստանում, Ռուսաստանում, Ուկրաինայում, Բելառուսում, Վրաստանում, Գերմանիայում, ԱՄՆ-ում, Հունաստանում, Լեհաստանում և այլուր:

Այսօր պահանջված ու սիրված է նաև Պռոշյանի կոնյակի գործարանի հայկական ավանդական բաղադրատոմսերով պատրաստված «Ռոյալ» ապրանքանիշով պահածոյի տեսականին, որը մեծ պահանջարկ է վայելում նաև արտասահմանյան շուկայում: Տեսականին արտահանվում է Ռուսաստանի Դաշնություն, Միացյալ Նահանգներ, եվրոպական և մերձբալթյան երկրներ, Ղազախստան:

## ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՈՒՆԴ

Հայտնի է, որ զարգացած երկրներում բնակչության, մասնավորապես՝ երիտասարդության, 60-70 տոկոսն օգտվում է հանրային սննդի կետերից: Ցավոք, այս միտումն արդեն նկատելի է նաև մեր երկրում:

Հանրային սննդի ծառայություններից օգտվում են հանդիսությունների սրահները (90 տոկոս), սգո սրահները (70 տոկոս), ուսանողությունը (80 տոկոս):

Նշված դաշտը կարգավորվում է «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» և «Համապատասխանության հավաստման մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև նորմատիվ մի շարք փաստաթղթերով (ՀՍՏ 189-2000): Ցավոք, շատ կազմակերպություններ անտեսում են այս պահանջները: «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի Հոդված 12-ի Կետ 6-ը պահանջում է հանրային սննդի աշխատակիցներից (հրուշակագործ, մատուցող, խոհարար, բարմեն, բուֆետապան, սրահի վարիչ) պարտադիր ունենալ մասնագիտական կրթություն և լինել վերաորակավորված:

Մեր ուսումնասիրությունների ընթացքում պարզվել է, որ ոչ բոլոր աշխատակիցներն են ժամանակին անցնում բուժզննում, ոչ բոլորն ունեն մասնագիտական որակավորում, ձեռք բերված ոչ բոլոր մթերքներն ունեն համապատասխանությունը հավաստող փաստաթղթեր, ոչ բոլոր օբյեկտներն են ապահովված անհրաժեշտ առևտրատեխնոլոգիական սարքավորումներով:

Հիշյալ թերություններով են աշխատում ԱՁ Աշոտ Ղուկասյան «Հացատուն» խորտկարանը, «Մարաշի հրաշք», «Տի Էմ Էս բուրգեր», «Երևանյան լճի շաուրմա» ընկերությունները, «Զովունի» և «Եվրոպա» ռեստորանները, Մալաթիա տոնավաճառի դիմաց գործող FAMILY FAST FOOD խորտկարանը, ԱՁ Գոհար Թորոյան «Խորտկարանը», «Կրիստալ» բար-կարաոկեն, Բաշ Ապարան ընկերության «Ապարան» բուֆետը, «Բալենի Ա. Կ.» խոհարարական խանութը, «Նոր թոնրատուն» և «Հացատուն» խորտկարանները:

**Մոնիթորինգային աշխատանքները շարունակվում են: Դրանց կարող են մասնակցել նաև սպառողները՝ կապ հաստատելով 010 24 92 04 հեռախոսահամարով:**

## ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏ

### ԷՅ-Ի-ՋԻ-ՍԵՐՎԻՍ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Էյ-Ի-Ջի-Սերվիսը» ՀՀ ողջ տարածքում ունի 15 տարածքային և իրենց կազմում 36 տեղամասային ծառայություն, որոնք սպասարկում են ավելի քան 700 հազար բնակիչ-բաժանորդի և մոտ 6000 բաժանորդ-կազմակերպություն: Յուրաքանչյուր ամիս հանրապետության տարածքում իրականացվում է ավելի քան 100 հազար բաժանորդի ներտնային գազասպասարկման համակարգերի տեխնիկական սպասարկում:

Գազ սպառող բաժանորդների ներտնային համակարգերի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցում, գազօգտագործող սարքավորումների կարգաբերում և վերանորոգում, արտահոսքի վերացում, ծխաօդատար համակարգի զննում, փականների քսայուղում, ձայնաազդանշանային անվտանգության համակարգի թեստավորում և այլն: Սրանք են «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ընկերության նպատակն ու առաքելությունը (մանրամասն՝ էջ 22):

### ՎԵՐԴԵ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԴԵ ընկերությունն օգտագործում է շրջակա միջավայրը չաղտոտող, անվնաս նյութեր և համագործակցում է իտալական ու գերմանական FIRBIMATIC, Miele, PONY, Seitz, Kreussler, BUFA և այլ ընկերությունների հետ՝ իրականացնելով քիմիական և բնական մաքրում:

Այստեղ հնարավոր է հագուստն անջրաթափանց դարձնել, ինչն օգնում է պաշտպանվել ջրից ու ձյունից, հետևաբար լավ է դիմակայում կեղտաբծերին ու լաքաներին: Գործընթացն իրականացվում է Seitz գերմանական ընկերության նյութերով:

Վարագույրների մաքրման դեպքում ՎԵՐԴԵ-ի աշխատակիցները կօգնեն հանել վարագույրները, իսկ դրանք մաքրելուց, արդուկելուց և փաթեթավորված տեղափոխելուց հետո անհրաժեշտության դեպքում նաև կկախեն:

ՎԵՐԴԵ սրահում նրբորեն ու խնամքով մաքրվում են նաև հարսանյաց և երեկոյան զգեստները: Այս դեպքում օգտագործվող հատուկ նյութերը չեն վնասում զգեստը՝ պահպանելով զարդարանքն ու գործվածքները:

Գորգերի մաքրումը նույնպես խորհուրդ է տրվում վստահել ՎԵՐԴԵ մաքրման սրահին: Եթե գորգը շատ հին է և հատուկ արժեք ունի, ապա սրահի փորձագետները կմաքրեն այն Green Earth տեխնոլոգիայով, ինչի արդյունքում գորգը չի վնասվի և լիովին կպահպանի իր գույնն ու որակը:

Սրահն իրականացնում է այնպիսի թավշյա, կաշվե ու մորթե իրերի մաքրում, ինչպիսիք են վերարկուները, բաճկոնները, կոստյումները, ժիլետները, տաբատները, ձեռնոցները և այլն:

ՎԵՐԴԵ մաքրման սրահն իրականացնում է կաշվե հագուստի և իրերի ներկում: Գունապնակն ընդգրկում է 1000-ից ավելի գույներ, ինչը թույլ է տալիս ինչպես լիովին փոփոխել կաշվի գույնը, այնպես էլ այն դարձնել մեկ երանգով բաց կամ մուգ:

www.verde.am կայքում ներկայացված են բոլոր ծառայությունների գնացուցակը և մանրամասն նկարագրումը:

ՎԵՐԴԵ սրահն իրականացնում է նաև առաքում: Հագուստը պատվիրատուի նախընտրությամբ փաթեթավորվում է ծալած կամ հատուկ կախիչներով:

## ՎԻ-ԷԼ-ՎԻ ՍԵՆԹՐ ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱՅԻ ԽԱՆՈՒԹՆԵՐԻ ՑԱՆՑ

ՎԻ-ԷԼ-ՎԻ ՍԵՆԹՐ ընկերությունը զբաղվում է կենցաղային, խոհանոցային և համակարգչային տեխնիկայի ներկրմամբ և մեծածախ ու մանրածախ վաճառքով: Համագործակցում է հանրահայտ SAMSUNG, TOSHIBA, SONY, HITACHI, PANASONIC, HISENSE, VIKASS, SIMFER, LG և այլ ընկերությունների հետ: «ՎԻ-ԷԼ-ՎԻ Սենթրը» Hisense և Simfer ընկերությունների պաշտոնական ներկայացուցիչն է, նաև Sony ընկերության պաշտոնական գործընկերը:

Բացի կենցաղային, խոհանոցային և համակարգչային տեխնիկայից ընկերության սրահներում ներկայացվում է խոհանոցային պարագաների և բարձրակարգ սպասքի լայն տեսականի:

«ՎԻ-ԷԼ-ՎԻ Սենթր» էլեկտրատեխնիկայի խանութների ցանցը, որ առաջատար դիրք է զբաղեցնում հայկական շուկայում, ունի ընդարձակ սրահներ, ապրանքների գլխապտույտ տեսականի, սպասարկման բարձր որակ, մանուկների համար նախատեսված խաղահրապարակ և սրճարան: Աշխատակազմը բարեխիղճ է և պրոֆեսիոնալ:

«ՎԻ-ԷԼ-ՎԻ Սենթր» էլեկտրատեխնիկայի խանութ-սրահներում լավագույնս լուծված է նաև ապառիկ գնումներ կատարելու խնդիրը: Ընկերությունը համագործակցում է Հայաստանի գրեթե բոլոր առաջատար բանկերի հետ, ապառիկ վաճառքն իրականացվում է տեղում՝

հնարավորություն տալով հաճախորդին կատարելու արագ և շահավետ գործարք ու մասնակցելու A դասի Mercedes Benz ավտոմեքենայի խաղարկությանը:

Վաճառասրահներ գործում են նաև մարզերում, ինչի արդյունքում Գյումրիում, Աբովյանում, Էջմիածնում, Հրազդանում, Արցախում, Սևանում և այլուր սպառողը կարողանում է ձեռք բերել որակյալ տեխնիկա:

«ՎԻ-ԷԼ-ՎԻ Սենթր» էլեկտրատեխնիկայի խանութին կից գործում է նաև մասնագիտացած սերվիս-կենտրոն, որտեղ կատարվում են վաճառված ապրանքների սպասարկման աշխատանքներ ինչպես երաշխիքային ժամկետի մեջ գտնվող, այնպես էլ ժամկետանց տեխնիկայի համար:

---

## ԷԼԲԱՏ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայ-գերմանական «Էլբատ» ընկերությունն առաջարկում է ավանդական, ինչպես նաև հիբրիդային տեխնոլոգիաներով նախագծված մարտկոցներ, որոնք գերմանական և իտալական ինժեներական մտքի, ինչպես նաև հայ արտադրողի փորձի և աշխատասիրության արդյունքն են: Մարտկոցները ստեղծվել են ցանկացած տիպի տրանսպորտային միջոց առավելագույն հզորությամբ ապահովելու նպատակով:

Մեր օրերում բարձրորակ սարքավորումներով հագեցած մեքենաներն առավել մեծ պահանջներ են ներկայացնում իրենց համար նախատեսված մարտկոցներին, և «Էլբատ» ընկերությունն իր արտադրանքի որակով ոչ միայն համապատասխանում է շուկայի բոլոր պահանջներին, այլև գերազանցում է դրանք՝ առաջարկելով հզոր, էներգիան հուսալի պահպանող, սպասարկում չպահանջող կամ գրեթե չպահանջող մարտկոցներ:

«Էլբատն» առաջարկում է մարտկոցների ամբողջական տեսականի՝ նախատեսված բոլոր տեսակի մեքենաների՝ մարդատարների, բեռնատարների, գյուղատնտեսական և շինարարական տեխնիկայի համար: Արտադրանքն ապահովում է մեքենաների էլեկտրական համակարգի օգտագործման անխափանությունը կլիմայական և ճանապարհային ցանկացած պայմանների դեպքում:

«Էլբատի» նորագույն տեխնոլոգիաներով հագեցած, եվրոպական և միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխանող լաբորատորիաները յուրաքանչյուր փուլում փորձարկում են մարտկոցի բաղադրիչները՝ ապահովելով որակի հսկումը: Ընկերությունում արտադրվող յուրաքանչյուր մարտկոց փորձարկվում է համաձայն CCA պարամետրերի (սառը հոսանքի մեկնարկային ընթացք)՝ երաշխավորելով հաճախորդին տրամադրված յուրաքանչյուր մարտկոցի 100-տոկոսանոց հզորությունն ու բարձր որակը:

«Էլբատը» ներդրել է ջրի և օդի աղտոտման դեմ պայքարելու ամենաարդյունավետ համակարգերից մեկը, որը թույլ է տալիս ֆիլտրել արտադրական խառնուրդներն ու վնասակար արտանետումները: Նախքան գործունեություն ծավալելը ընկերությունը ձեռք է բերել Որակի կառավարման համակարգ (ISO 9001: 2008) և Բնապահպանական կառավարման համակարգ (ISO 14001: 2004):

«Էլբատը» առաջարկում է մեծածախ գներ և հուսալի երաշխիքային համակարգ:

Սպառողների ազգային ասոցիացիան
և Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա
Իրավաբանական անձանց միությունը
ցավով տեղեկացնում են, որ կյանքից վաղաժամ հեռացել է
երկար տարիներ մեզ հետ համագործակցած,
մսամթերքի ոլորտում իր փորձառությամբ
ու մասնագիտական հմտություններով աչքի ընկնող,
«Բարի սամարացի» ընկերության
առաջատար մասնագետ Կարեն Պողոսյանը:

## ԿԱՐԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Կարեն Պողոսյանը ծնվել է 1976 թ., Արարատի մարզի Այնթափ գյուղում: Գերազանցությամբ ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և կրթությունը շարունակել Հերացու անվան Երևանի բժշկական համալսարանում: Զինվորական պարտքը կատարել է ՀՀ բանակում: Ավելի ուշ, 2018-ին, ավարտել է Ագրարային համալսարանի մագիստրատուրան, ապա Աստվածաբանական Գլոբալ համալսարանը:

Կարեն Պողոսյանն աշխատանքային գործունեությունը սկսել է, որպես «Բարի սամարացի» ընկերության բանվոր, ապա, մշտապես զարգացնելով մասնագիտական հմտություններն ու աշխատանքին վերաբերվելով մեծ պատասխանատվությամբ, հասել է գլխավոր տեխնոլոգի պաշտոնին, ինչի արդյունքում «Բարի սամարացի» ընկերության արտադրանքը պարբերաբար արժանացել է որակի բարձրագույն գնահատականի և բազմաթիվ մրցանակների:

Կարեն Պողոսյանը 2005-ից Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ պատվավոր անդամ է, նաև նույն Ակադեմիայի միս-մսամթերքի դեպարտամենտի անդամ: Աշխատանքային բոլոր տարիների մեծ սիրով ու պատրաստակամությամբ իր փորձն ու գիտելիքներն է փոխանցել երիտասարդ մասնագետներին, որոնք ևս հետագայում աշխատանքային հաջողություններ են գրանցել մսամթերքի ոլորտում:

Կարեն Պողոսյանն ամուսնացած էր, ուներ երկու երեխա: Անբասիր վարքի, խոնարհության ու բարության օրինակ էր:

# ԴԱՓՆՈՒ ՏԵՐԵՎ

Այս տերևները պիտանի են ոչ միայն խոհարարության մեջ, այլև հիանալի դեղամիջոց են: Դրանք բարձրացնում են իմունիտետը և օրգանիզմը մաքրում տոքսիններից: Անգամ լիարժեք չորանալուց հետո դափնու տերևը պահպանում է իր օգտակար հատկությունները:

Դափնու տերևները պարունակում են մի շարք միկրոտարրեր, հանքանյութեր, վիտամիններ, մասնավորապես՝ 100 գրամ դափնու տերևը պարունակում է 46,5 մգ վիտամին C, որն օգնում է ազատվել օրգանիզմում վնասակար ազատ ռադիկալներից: 100 գրամ դափնու տերևը պարունակում է օրվա ընթացքում մարդու համար անհրաժեշտ ֆոլաթթվի 45, վիտամին A -ի 26 տոկոսը: Նաև հարուստ է պղնձով, կալիումով, կալցիումով, մանգանով, երկաթով, սելենով, ցինկով ու մագնեզիումով:

**Դափնու տերևը՝ բժիշկ**

1. Դափնու բույրը թուլացնում է նյարդային լարվածությունը: Տերևն այրելիս արտադրվում ծուխ, որի բաղադրիչները հանգստացնող ներգործություն ունեն:

2. Դափնու տերևով լոգանքները նվազեցնում են քրտնարտադրությունը: Հարկավոր է 25-35 հատ դափնու տերևի վրա լցնել 1 բաժակ եռացրած ջուր ու թրմել 3 ժամից ոչ պակաս, ապա խառնել այն ջրին, որով պատրաստվում եք լոգանք ընդունել: Ցանկալի է պրոցեդուրան կրկնել 2 շաբաթ:

3. Նույն թուրմն օգնում է ազատվել նաև լնդերի բորբոքումից: Բերանի խոռոչը ողողելուց հետո ցանկալի է 30 րոպե ոչինչ չուտել:

4. Դափնու թուրմն օժտված է հակասնկային ազդեցությամբ: Սրանով 15 օր, շաբաթական 3-4 անգամ մոտ 20 րոպե տևողությամբ ոտքերի լոգանքն օգնում է ամբողջովին ազատվել սնկերից:

5. Դափնու տերևն իջեցնում է արյան մեջ գլյուկոզայի մակարդակը, հետևաբար դրա թուրմով կարելի է պայքարել շաքարախտի դեմ:

6. Դափնու յուղի պարբերաբար օգտագործումն ազատում է մաշկային խնդիրներից, այդ թվում՝ պառկելախոցերից:

7. Նույն յուղն օգնում է ազատվել հազից, խթանում է խորխի դուրսբերումը:

8. Շամպունին ավելացված մի քանի կաթիլ դափնու յուղն արդեն 2 շաբաթից լիովին կվերացնի գլխի թեփը:

9. Շնորհիվ անոթների պատերը խոլեստերինային կուտակումներից մաքրելու հատկության՝ դափնին կարող է պաշտպանել հիպերտոնիայից ու աթերոսկլերոզի զարգացումից:

10. Ստոմատիտի զարգացման ժամանակ խորհուրդ է տրվում ծամել դափնու թարմ կանաչ տերև:

**Ուշադրություն**

**Օգտակարությամբ հանդերձ, դափնու տերևն ունի նաև հակացուցումներ: Այն խորհուրդ չի տրվում օգտագործել.**

- քրոնիկ գաստրիտի, ստամոքսի կամ 12-մատնյա աղու խոցի,
- լեղաքարային հիվանդության,
- պանկրեատիտի և սուր խոլեցիստիտի,
- ալկոհոլի չարաշահման դեպքում:

**Հիշեցում**

**Տնային պայմաններում ցանկացած բուժում սկսելուց առաջ հարկավոր է խորհրդակցել բժշկի հետ:**

# «ԷՅ-Ի-ՋԻ-ՍԵՐՎԻՍ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

## ԶԳՈՆՈՒԹՅԱՆ ԿՈՉ

**Ջեռուցման սեզոնին ընդառաջ «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ն գազասպառող բաժանորդներին կրկին ու կրկին զգոնության կոչ է անում՝ տեղեկացնելով անվտանգության կանոնների մասին: Գազասպառման համակարգերի տեխնիկական պայմանների խախտումները, ինքնաշեն վառարանների տեղադրումը, գազասարքերի ինքնուրույն տեղափոխումը, Ընկերության փականագործի արձանագրած այլ խախտումները չվերացնելը, ինչպես նաև անվտանգության ձայնաազդանշանային սարքն անջատած պահելը կարող են ունենալ աղետալի հետևանքներ: Բնակչին թունավորումից և գազի արտահոսքի հետ կապված այլ վտանգներից պաշտպանելու նպատակով «Գազպրոմ Արմենիա» Ընկերությունն իր աշխատակիցների միջոցով տարածում է «Ներտնային գազասպառման համակարգի անվտանգ շահագործման և տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման» ուղեցույցներ՝ կոչ անելով գոնե մեկ անգամ կարդալ և առաջնորդվել առկա տեղեկատվությամբ և հրահանգներով:**

### *Ուղեցույցը ներկայացնում ենք ստորև:*

ՀՀ տարածքում ներտնային գազասպառման համակարգի անվտանգ շահագործման և տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ (այսուհետ՝ Մատակարար) հանձնարարությամբ բաժանորդների ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման (այսուհետ՝ ՆՏԳՍՀ ՏՍ) ծառայության աշխատանքներն իրականացվում են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 15.10.2014 թ. N383 Ն որոշմամբ հաստատված «Բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ)» պայմանագրի հավելված N2՝ «ՆՏԳՍՀ ՏՍ ծառայությունների մատուցման մասին» Համաձայնագրի դրույթների համաձայն, պլանային կարգով՝ տարեկան առնվազն երկու անգամ պարբերականությամբ, ինչպես նաև արտապլանային՝ բաժանորդների կանչերով՝ «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Սպասարկող) կողմից:

## Փականագործը պարտավոր է.

- ներկայանալ բաժանորդին՝ անձը հաստատող վկայականով, դիտարկել գազիֆիկացման վերաբերյալ փաստաթղթերի փաթեթը, փաստացի գազահամակարգը համեմատել նախագծի հետ և իրականացնել ՆՏԳՍ համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություն,
- ստուգել և ապահովել գազասարքերի, ծխաօդատար համակարգի (ծխատար և օդատար ուղիներ, ծխատար խողովակներ, վերնափեղկ, օդի ներհոսքի բացվածք) ու գազասպառման անվտանգության ձայնաազդանշանային համակարգի (ձայնաազդանշանային սարք և գազամատակարարման ընդհատման ավտոմատ փակող կափույր, այսուհետ՝ ՁԱ համակարգ) միացումների ճշտությունը և ամբողջականությունը, սահմանված կարգով կատարել դրանց տեխնիկական սպասարկում,
- բաժանորդներին հրահանգավորել՝ ներտնային գազահամակարգում բնական գազից անվտանգ օգտվելու պահանջների վերաբերյալ,
- ՆՏԳՍ համակարգի տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման ԱԿՏ-ում բաժանորդի հետ համատեղ հավաստել ծառայության մատուցման իրականացումը: ՆՏԳՍ համակարգում թերությունների խախտումների հայտնաբերման դեպքում կազմել համապատասխան արձանագրություն, գազասարքը անջատել, խցանային փականը խցափակել և կնքել: Բաժանորդին իրազեկել արձանագրված խախտումների վերացման հնարավոր տարբերակների և ժամկետների վերաբերյալ:

## Հարգելի բաժանորդ

Դժբախտ դեպքերից զերծ մնալու համար պահպանեք կենցաղում բնական գազից անվտանգ օգտվելու պահանջները:

- Առանց հսկողության մի՛ թողեք անվտանգության ավտոմատ համակարգեր չունեցող գործարկված գազասարքերը, դրանց երկարատև շահագործման ընթացքում հաճախակի օդափոխեք շինությունը:
- Հնարավորության դեպքում լողասենյակներում տեղադրված ջրատաքացուցիչները տեղափոխեք խոհանոց կամ դրա համար նախատեսված այլ շինություն (սենք),
- ՆՏԳՍ համակարգում փոփոխություններ կատարելու, գազասարքերի փոխարինման, վերատեղադրման կամ դրանց անսարքությունների վերացման համար դիմե՛ք Մատակարարին կամ Սպասարկողին:

## Չի՛ թույլատրվում

- անջատել գազասպառման անվտանգության ձայնաազդանշանային ավտոմատ սարքը էլեկտրասնուցումից (ազդանշանիչի էլեկտրաէներգիայի ծախսը տարեկան կազմում է ընդամենը՝ 8,64 կՎտ, շուրջ 400 դրամ),
- ինքնակամ փոխարինել, նորոգել և տեղափոխել գազասարքերը,
- գազօջախներն օգտագործել ջեռուցման նպատակով: Դրանց վրա տեղադրել մեծ մակերեսով կաթսա կամ թիթեղ՝ առանց հավելյալ տակդիրի, քանի որ սահմանափակվում է այրման համար անհրաժեշտ օդի ներհոսքը, զարգանում է թերայրում (շմոլ գազի առաջացում),
- օդատար ուղիներին միացնել օդաքարշ կամ ծխատար, դրանք փակել լաթով կամ այլ առարկաներով,
- փակել օդափոխության ու գազի այրման համար անհրաժեշտ օդի ներհոսքի նպատակով նախատեսված՝ դռան տակի բացվածքը,
- սահմանափակել ծխահեռացման ուղիների անցողունակությունը (քարշը), օգտագործել ծալքավոր նրբաթիթեղյա խողովակներ և այլ խոչընդոտներ:

## Արգելվում է օգտվել գազասարքերից, եթե.

- գազասարքն անսարք է, գազն այրվում է անկայուն կամ դեղնակարմրագույն (մրոտ) բոցով կամ խզվում (կտրվում) է այրիչից,
- գազասպառման անվտանգության ձայնաազդանշանային ավտոմատ համակարգը չի աշխատում կամ անսարք է,
- ծխաօդատար համակարգում բացակայում է քարշը, կամ առաջացել է ետքարշ:

# ՁԱՅՆԱՅԻՆ ԱԶԴԱՆՇԱՆԻ ՄԻԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՆՀԱՊԱՂ ՕԴԱՓՈԽԵԼ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՁԱՆԳԱՀԱՐԵԼ 1-04 ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՈՎ:

## Խորհուրդ չի տրվում

- օգտվել ծխատարով ջրատաքացուցիչներից և ջեռուցման սարքերից՝ թանձր մառախուղի, ուժեղ քամիների և տարվա առավել շոգ եղանակների ժամանակ,
- գազօջախները և ծխատարով գազասարքերն օգտագործել օդորակիչների (кондиционер) հետ համատեղ:

## Անհրաժեշտ է

- ծխատարով ջրատաքացուցիչները և ջեռուցման սարքերը միացնելուց առաջ և միացնելուց մինչև 5 րոպե հետո լուցկու բոցի մոտեցման եղանակով ստուգել ծխատար ուղիներում քարշի առկայությունը,
- առատ ձյան և ուժեղ քամիների դեպքում հաճախակի ստուգել ծխատար խողովակի արտաքին մասի ամբողջականությունը և մաքրել գլխամասը:

## Արգելվում է

1. Անջատել անվտանգության ազդանշանային համակարգը:
2. Կատարել գազահամակարգի ինքնակամ փոփոխություններ:

Գազասպառման անվտանգության ձայնաազդանշանային սարքի ազդանշանի՝ բնակարանում գազի հոտ զգալու, արտահոսքի, գազասպառման հետ կապված՝ բնակիչների առողջական վիճակի վատթարացման (թունավորում, հրդեհ և այլն) կասկածների կամ այլ վթարային իրավիճակներում հարկավոր է.

- անհապաղ զանգահարել շուրջօրյա գործող գազի վթարային ծառայություն 1-04, կամ ԱԻՆ 9-11 հեռախոսահամարներով,
- չծխել, չօգտվել բաց կրակից կամ կայծ առաջացնող որևէ միջոցից, չմիացնել և չանջատել էլեկտրասարքավորումները,
- փակել գազասարքերի և սնող գազախողովակների խցանային փականները, բացել դռները և պատուհանները, օդափոխել շինությունը,
- զգուշացնել ընտանիքի անդամներին և հարևաններին, նրանց հանել անվտանգ և չգազավորված տարածք,
- գազի մուտքը բնակարան անվտանգության ավտոմատ կափույրի միջոցով փակելու դեպքում արգելվում է ինքնակամ գործարկել այն՝ առանց վերացնելու վթարային ազդանշանի պատճառը:

**Ձեր բնակարանի գազամատակարարումը կդադարեցվի, եթե.**

- խոչընդոտեք ներտնային գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման, անսարք գազասարքի անջատման, խցանային փականի խցափակման և կնքման աշխատանքներին,
- պոկեք խցափակման կնիքը և ինքնակամ միացնեք գազասարքը:

**ՆԵՐՏՆԱՅԻՆ ԳԱԶԱՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՏՇԱՃ ՎԻՃԱԿԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿՐՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԸ:**

**ՀԻՇԵ՛Ք**
**ՇՄՈՒԼ ԳԱԶԻ 0,4-0,5 % ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ 10-15 ՐՈՊԵԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՀԱՑՈՒ Է:**

## Մշտական կատարելագործում և բարձրակարգ սպասարկում

«Էյ-Ի-Ջի-Սերվիս» ընկերությունում մշտապես կարևորվում են աշխատողների ուսուցման, մասնագիտական ունակությունների կատարելագործման, որակավորման բարձրացման, ինչպես նաև բաժանորդների նկատմամբ բարեկիրթ վերաբերմունքի դրսևորման հարցերը:

Ընկերության ուսումնական կենտրոնում ստեղծված են բոլոր պայմանները տեսական և գործնական պարապմունքների անցկացման համար: Կենտրոնը կահավորված է ժամանակակից կազմտեխնիկայով և սարքավորումներով: Գիտելիքների ուսուցումը և հետագայում ատեստավորումն անցկացվում են 3 մակարդակով՝ ստորաբաժանումների ղեկավարների, ինժեներատեխնիկական աշխատողների և փականագործների: Ուսումնական պրոցեսն իրականացվում է Հանրապետությունում գործող «Գազի տնտեսությունում տարրերի տեխնիկական շահագործման կանոններ և աշխատանքի անվտանգության պահանջներ տեխնիկական կանոնակարգի», «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում տեխնիկական կանոնակարգի», «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից մշակված և ներդրված Կազմակերպության ստանդարտների, հրահանգների, ինչպես նաև այլ նորմատիվ փաստաթղթերի դրույթների և պահանջների ուսուցման մասով: Անցկացվում են գործնական պարապմունքներ փականագործների մասնագիտական հմտությունների կատարելագործման ուղղությամբ: Դասընթացները վարում են Ընկերության համապատասխան որակավորում ունեցող մասնագետները:

«Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ն ջանում է մշտապես տեղեկացված լինել գազասպառման սարքերի ու դրանց հետ կապված այլ սարքավորումների՝ շուկայում կատարվող բոլոր փոփոխություններին ու նորություններին, որոնք նույնպես ընդգրկված են վերապատրաստման դասընթացների ծրագրում: Դասընթացի ավարտից հետո մասնակիցները հատուկ պատրաստված հարցատոմսերով քննություն են հանձնում և աշխատանքի ընթացքում պարբերաբար ատեստավորվում են:

**ՄԻ՛ ՄՈՌԱՑԵՔ, ՈՐ ՎԹԱՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՎՏԱՆԳԻ ԵՔ ԵՆԹԱՐԿՎՈՒՄ ՈՉ ՄԻԱՅՆ ԴՈՒՔ, ԱՅԼԵՎ ՁԵԶ ՇՐՋԱՊԱՏՈՂ ՄԱՐԴԻԿ:**
**ՊԱՀՊԱՆԵ՛Ք ՁԵՐ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՅԱՆՔԸ:**
**ԵՎ ՀԻՇԵ՛Ք**
**ԺԱՄԱՆԱԿԻՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ ԴԻՄԵԼԸ ԿՕԳՆԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԽՆԴԻՐԸ, ԼՈՒԾԵԼ ԵՎ ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ԱՅՆ:**

# ԱՌԵՎՏՈՒՐ

**Ժամանակակից տեխնոլոգիաները թույլ են տալիս բազմաթիվ գործողություններ կատարել առանց տնից դուրս գալու, այսպես ասած, բազմոցին նստած: Սակայն ցանկացած հարմարավետության կողքին հնարավոր վտանգներն են: Կոնկրետ այս դեպքում, ըստ հոգեբանների, գնորդն ընտրություն կատարում է ոչ թե շոշափելի ապրանքների, այլ իր հույզերի միջև, որոնք առաջանում են գունագեղ պատկերներին նայելիս:**

**Առավելությունները**

• առցանց գնումները խնայում են ժամանակը և ֆիզիկական ուժը,

• առաջարկվող տեսականին մեծ է ու բազմազան,

• հնարավոր է անմիջապես տեղեկանալ զեղչերից ու ընտրություն կատարել հենց զեղչված ապրանքների միջև,

• առցանց խանութները հնարավորություն են ստեղծում վճարել և՛ բանկային քարտով, և՛ էլեկտրոնային դրամապանակով,

• գնումներ կատարելուց հետո անհրաժեշտություն չի լինում ծանր պայուսակներ քարշ տալու, քանի որ գործում է առաքում:

**Թերությունները**

• ապրանքը հնարավոր չէ շոշափել կամ փորձել, հետևաբար չկա երաշխիք, որ պատվիրված ապրանքը մեկին մեկ նման կլինի կատալոգում պատկերվածին,

• հնարավոր է դառնալ խաբեության զոհ՝ անծանոթ կայքերին տրամադրելով ավելի շատ անձնական ու քարտային տվյալներ, քան պետք է իրականում:

**Ուշադրություն**

**Տհաճ հետևանքներից խուսափելու համար հարկավոր է.**

• ծանոթանալ վաճառքն իրականացնող կայքին ու դրա մասին կարծիքներին,

• համեմատել միևնույն ապրանքի գները բազմաթիվ առցանց խանութներում՝ գնում կատարելու համար հնարավորինս ցածր գնով,

• ընտրել ամենաանհրաժեշտը, քանի որ, տվյալ պահին չզգալով գնումների ծավալն ու ծանրությունը, հնարավոր է, որ ընտրվեն ոչ առաջին անհրաժեշտության ապրանքներ, հատկապես որ վիրտուալ դրամի նվազումն այնքան շոշափելի չէ, որքան իրականինը,

• հնարավորինս զգուշանալ շուկայավարողների այնպիսի ծուղակներից, որոնք հնչում են մոտավորապես այսպես՝ այս ապրանքը գնել հնարավոր է միայն 15 օր կամ բաց մի՛ թողեք ամենաէժան ապրանքը և այլն, ինչի հետևանքով գնորդը հաճախ ջանք չի խնայում գնումներ կատարելու կամ թվացյալ օգուտները ձեռքից բաց չթողնելու համար (այլ խոսքով ասած, ստեղծվում է արհեստական խուճապ, ինչից շահում է միայն վաճառողը),

• խուսափել մյուսներից հետ մնալու կամ ամբողջի մաս չկազմելու տագնապից, այսինքն, եթե գովազդն աղաղակում է, որ տվյալ ապրանքն ամբողջ աշխարհում արդեն գնել է ավելի քան 1 մլրդ մարդ, կամ վերջին 24 ժամում վաճառվել է նույնանուն ապրանքից մոտ 50 000 նմուշ, դեռ չի նշանակում, որ այն ձեզ իսկապես պետք է,

• նախապես քննարկել ապրանքի վերադարձի, առաքման ժամկետի ու պայմանների մանրամասները (ոչ բոլոր դեպքերում է առաքումն անվճար):

# Սեվ ուրբաթ

**Սև ուրբաթը սպասված իրադարձություն է ամբողջ աշխարհում: Այն լայնածավալ գովազդային արշավ է, խելացի շուկայավարման, ուշադրություն հրավիրելու և մշտական հաճախորդների թիվը զգալիորեն մեծացնելու հնարք: Այս օրն ասոցացվում է մեծաքանակ գնումների, զեղչերի ու նվերների հետ: Նախատեսված է, որ օրը հավասարաչափ շահավետ պիտի լինի և՛ գնորդի, և՛ վաճառողի համար:**

**Օգուտները**

1. Ճիշտ կազմակերպված սև ուրբաթը վստահաբար դրական ազդեցություն կունենա ոչ միայն տվյալ օրվա եկամուտի, այլև հետագայում գնորդների թվի աճի վրա:
2. Հնարավորություն է ցանկալի ապրանքը հնարավորինս էժան ձեռք բերելու:
3. Օրը հարմար է պահեստում կուտակված ապրանքներից ազատվելու համար՝ ապրանքը վերածելով դրամի և տեսականին համալրելով նոր ապրանքներով:
4. Մեկ անգամ բարեհաջող գնումներ կատարելուց հետո գնորդը պատրաստ է տվյալ խանութ վերադառնալ նորից ու նորից:

**Մինչև գնումներ կատարելը հարկավոր է.**

- պարզել ցանկալի ապրանքի գինը և համեմատել տվյալ օրվա գնի հետ՝ հասկանալու համար զեղչի իրական լինելը (սա գումար տնտեսելու լրացուցիչ հնարավորություն է),
- ծանոթանալ ապրանքը վերադարձնելու եղանակներին ու հնարավորությանը:

**Ի դեպ**

1. Որպեսզի գնորդը զեղչերի օրը գոհ մնա գնումից, պետք է հստակ հասկանա, թե ինչ է ուզում գնել: Հարկավոր է նախապես ճշտել վաճառքի վայրն ու ժամը, քանի որ վաճառքի մեկնարկից մի քանի ժամ անց նա դժվար թե գտնի իրեն անհրաժեշտ ապրանքը:
2. Որպեսզի գործարարները շահույթ ունենան, նախ պետք է որոշակի գումար ներդնել, նաև մտածել անվտանգության, գովազդի, դրամարկղի անխափան աշխատանքի ու խանութի ողջ անձնակազմի մասին:

**Հիշեցում**

**Անկախ օրացույցային օրերից տրամադրված զեղչերը պետք է լինեն թափանցիկ, իսկ արտադրանքը՝ որակյալ: Սա միակ միջոցն է հաճախորդների վստահությունը շահելու և վաճառքի ծավալները մեծացնելու:**

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Գնորդների բազմությունը կարող է վերահսկողությունից դուրս գալ՝ վտանգելով իրեն ու վնասելով վաճառվող գույքը:**

# ԽՆԿԱԾԱՂԻԿ ՍՈՎՈՐԱԿԱՆ

## *Origanum vulgare L.*

***Հայկական տարանունները - զվիրակ, թորթ, թորթիկ, կատրվան, սևածաղիկ, օրիկանոն***

**Դեղաբույսի նկարագրությունը:** Խուլեղինջազգիների շրթազգիների ընտանիքին պատկանող 30-60 սմ բարձրությամբ բազմամյա խոտաբույս է: Ունի ճյուղավորված, սողացող կոճղարմատ, քառանիստ, կարմրամանուշակագույն ցողուն, տերևները հակադիր են, երկարավուն, ձվաձև, ամբողջաեզր կամ ատամնավոր, թավոտ, ծաղիկները ծիրանագույն են, մանր, միասեռ կամ երկսեռ, անուշաբույր, պտուղը բաղկացած է կլոր, դարչնագույն 4 սերմիկներից: Ծաղկում է ողջ ամռան ընթացքում, պտղակալում՝ օգոստոս-սեպտեմբերին: Բազմանում է սերմերով, արմատամասերով և ցողունակոթուններով:

**Քիմիական բաղադրությունը:** Բույսը պարունակում է մինչև 1,5 տոկոս եթերայուղ, դաբաղանյութեր, ֆլավոնոիդներ, սեսկվիտերպեններ, գերանիլացետատ, տույոն, պիգմենտ, C վիտամին: Տերևներում հայտնաբերված է նաև կարոտին, իսկ սերմերում մինչև 28 տոկոս ճարպայուղ: Եթերայուղի 20-50 տոկոսը կազմում են թիմոլը և նրա իզոմեր կարվակրոլը:

**Բուժական նշանակությունը:** Բուժման նպատակով օգտագործվում է բույսի ամբողջ վերգետնյա մասը, որը հավաքում են ծաղիկները լրիվ բացվելուց հետո, չորացնում բացության, կախած վիճակում, այնուհետև տրորում՝ ստանալով ծաղիկների և տերևների փոշետիպ խառնուրդ: Կոշտ մասերը հեռացնում են: Պատրաստի հումքը պիտանի է մինչև 3 տարի: Խնկածաղիկը հոտավետ է, դառն ու դուրեկան համով:

Դեղաբույսը ժողովրդական բժշկության մեջ օգտագործվում է հեպատիտների, դեղնուկների, սուր և խրոնիկական բրոնխիտների, հազի, ցավոտ դաշտանի, ականջի ու ատամի ցավերի, վերջույթների գանգրենայի, արցունքահոսության, ճիճվակրության, լերդացավի, առատ քրտնարտադրության դեպքում: Մեղրի հետ կտրում է հազը, լոգանքի ձևով՝ մաշկի քորը:

**Կիրառման եղանակները:** Ջրաթուրմ պատրաստելու համար 2 թեյի գդալ հումքը 15-20 րոպե թրմել 1 բաժակ եռման ջրում, ապա ըմպել տաք վիճակում, կեսական բաժակ, օրը 3-4 անգամ, ուտելուց 15-20 րոպե առաջ: Կամ 1 թեյի գդալ հումքը 2 ժամ թրմել 1 բաժակ եռման ջրում, ապա ըմպել 1-ական ճաշի գդալ օրը 3 անգամ:

Եփուկ պատրաստելու համար 10-15 գ հումքը եռացնել 1 բաժակ եռման ջրում 10 րոպե, ապա ընդունել 1-ական ճաշի գդալ օրը 3 անգամ:

Ոգեթուրմ պատրաստել չոր հումքը 1/2-ի հարաբերությամբ՝ խառնելով 70 աստիճանի սպիրտի հետ, ըմպել 20-ական կաթիլ, ջրով, օրը 3 անգամ: Փոշին շնչել հարբուխի ժամանակ:

**Այլ օգտակար հատկանիշներ:** Խնկածաղիկը մշակվում է նաև որպես եթերայուղային և մեղրատու բույս: Տերևներն օգտագործվում են որպես համեմունք: Եթերայուղն օժտված է միջատասպան հատկությամբ, փեթակից վանում է ցեցերին և մրջյուններին:

**Արշավիր Թորոսյան**
*Հայաստանի դեղաբույսերը*
*Երևան, 1983*

# ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ ԱՐՎԵՍՏԸ

*Միրելիների և մտերիմների հետ հարաբերությունները ոչ միշտ են հարթ ու կատարյալ: Տարբեր տեսակետներ, նյարդային պոռթկում, երբեմն փոխադարձ վիրավորանքներ, ու վիճաբանությունը պատրաստ է:*

*Ինչ խոսք, ճանապարհը դեպի հաշտություն այնքան էլ դյուրին չէ: Մեծ է չհասկացված լինելու վախը, երբեմն ավելորդ հպարտությունն է գլուխ բարձրացնում:*

*Թվում է, թե առավել նվաստացուցիչ բան չկա, քան դիմացինից ներողություն խնդրելը, բայց իզուր:*

*Եթե տարաձայնությունները ծագել են մանրուքների պատճառով, ապա ներողություն խնդրելը դժվար չէ: Մինչդեռ լուրջ վիճաբանությունը լուրջ մուրեցում է պահանջում, ինչը հնարավորություն կտա գոնե մասամբ վերականգնել հարաբերությունները: Նման իրավիճակում վճռորոշը կողմերի իմաստությունն ու տակտի զգացումն է:*

***Ինչ անել***

1. Սկզբում դժվար կլինի, բայց փորձեք ընդունել ձեր մեղքը:
2. Վերլուծեք ձեր խոսքերը, գործողությունները, տեսակետները, շարժումները:
3. Ընտրեք տվյալ իրավիճակին ու վայրին համապատասխան բառեր, որոնք առավել կհեշտացնեն հաշտությունը:
4. Մի՛ բացառեք հենց այս առիթով կազմակերպված գեղեցիկ ընթրիքը, ջերմ ու անկեղծ խոսքերն ու հաճելի անակնկալները:
5. Ընտրեք փաղաքշական բառեր, որոնք, վստահ եք, կարող են սիրտ հալեցնել:
6. Ներողություն խնդրելիս խուսափեք ավելորդ նախատինքներից: Սրանից վիճակը միայն կվատթարանա:

***Տարածված սխալներ***

- տվյալ պահին դիմացինի տրամադրությունն ու տրամադրվածությունը հաշվի չառնելը,
- վերամբարձ բառերով ու գրքային արտահայտություններով դիմացինի սիրտը շահել փորձելը,
- հին մեղադրանքները նորից ջրի երես հանելը, ինչը կարող է նոր վեճ հրահրել:

***Հիշե՛ք***

Նա, ով ընդունում է իր սխալն ու բացթողումը, ավելի բարձր է, քան այն մյուսը, որն ամեն կերպ, իրական ու հորինովի փաստարկներով փորձում է ապացուցել իր իբր ճշմարտացի լինելը, միմիայն որպեսզի խուսափի ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ բառից:

# ՄՈՒԶԵՅՈՒՄՆԵՐ

## Աշուն 2021

*Տարվա ոչ մի եղանակի ոչ մի կին չի ցանկանում հագնել այնպիսի հագուստ, որը կթաքցնի իր բարեկազմ մարմինը:*
*Շլացնող տեսք ունենալու համար աշունն առաջարկում է մետաղական փայլով թափանցիկ զգեստներ, ծաղկային պրինտներ, ծոպեր, նաև ռազմական ոճ:*
*Գույները շոայլ են նույնքան, որքան ինքը՝ աշունը:*

Այս աշուն համաչափ կազմվածքն առավել աչք կշոյի հատկապես տրիկոտաժե հագուստներով, որոնք սառը եղանակին կարող են լրացվել թեթև բաճկոններով, ռազմական ոճի բարակ վերարկուներով՝ զարդարված փետուրե դետալներով:

Զգեստապահարանում առանձնահատուկ տեղ ունեն գործած սվիտերներն ու ժակետները:

## Պայուսակներ

Ծալքավոր պայուսակներ և ասիմետրիկ մոդելներ, ուսապարկեր ու դասական տեսականի: Աշնանային սառը օրերը ջերմացնում են հատկապես մորթե պայուսակները, ձեռագործ վերարկուներին լրացնելու են գալիս նույնատիպ հյուսկեն մոդելները: Կնոջ արտաքին տեսքը հենց այսպես է ամբողջական դառնում:

## Կոշիկներ

Գեղեցիկ կոշիկները նորաձևության ցուցադրությունների ժամանակ մշտապես ուշադրության կենտրոնում են:

Ինչ խոսք նորաձևությունում ևս առաջնահերթությունները փոխվել են, և օրվա գերակշիռ մասն անցկացվում է թեթև ու տափակ պլատֆորմներով կոշիկներով: Իսկ առաջին տեղում արդեն մի քանի սեզոն մարզակոշիկներն են, թեև երբեք չեն անտեսվում կաշվից ու թավշակաշվից դասական բարձրակրունկ մոդելները:

# ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՆՈՐԱՁԵՎՈՒԹՅՈՒՆ

Նախորդ տարվա սահմանափակումներից, մասնավորապես՝ կարանտինից հետո դիզայներները ջանք չեն խնայում զգեստապահարանները հարստացնել վառ գույներով, համարձակ ու լավատեսություն ներշնչող տպագրություններով:

Տղամարդկանց աշնանային հագուստները համալրված են կարճ ու երկար ժիլետներով, մորթե դետալներով ու թեթև գլխարկներով:

## Կոշիկներ

Ինչպես միշտ, կարևորը հարմարավետությունն է: Գործնական հանդիպումներին տղամարդիկ դասական կոշիկներով են, ժամանցի վայրերում՝ տափակ, կտորե սանդալներով, իսկ լողափին՝ իհարկե, ամենաթեթև հողաթափերով:

## Պայուսակներ

Տղամարդկանց առաջարկվող տեսականին խիստ բազմազան է՝ նախատեսված տարբեր իրավիճակների համար: Բավական է միայն ընտրել, թե դրանցից որն է տվյալ պահին ամենահարմարը՝ դասական մոդելը, ուսապարկը, պորտֆելը, կլատչը, գոտի-պայուսակը, թե ճամպրուկը:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 30 ՏԱՐԵԿԱՆ Է.....2

2021 Թ. ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ
ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ .....12

ԴԱՓՆՈՒ ՏԵՐԵՎ.....21

«ԷՅ-Ի-ՋԻ-ՍԵՐՎԻՍ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ.
ԶԳՈՆՈՒԹՅԱՆ ԿՈՉ.....22

ԱՌՑԱՆՑ ԱՌԵՎՏՈՒՐ.....26

ՍԵՎ ՈՒՐԲԱԹ..... 27

ԽՆԿԱԾԱՂԻԿ ՍՈՎՈՐԱԿԱՆ..... 28

ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ ԱՐՎԵՍՏԸ..... 29

ԱՇՈՒՆ 2021.....30

Հասցեն՝ Դավիթ Անհաղթ 23, 3-րդ հարկ
Թեժ գիծ՝ (010) 24-92-04
E-mail: info@armconsumer.am;
nationalconsumerassociation@yahoo.com
URL:http//www.armconsumer.am

Տպաքանակը՝ 2000: Ծավալը՝ 2 մամուլ
Տպագրվել է ՏՊԱՐԱՆ ԷՅ ԷՄ
տպագրատանը
Բաժանվում է անվճար
Գրանցման վկայականը՝ 2215
Հղումը ՍՊԱՌՈՂ-ին պարտադիր է

AEG SERVICE

+ 374 10 23-93-27
+ 374 10 29-75-31
aeg@aegservice.am

Ներտնային գազասպառման համակարգերի
տեխնիկական սպասարկման
ծառայությունների մատուցում

# Մեր աշխատանքը
# Ձեր անվտանգության երաշխիքն է

www.aegservice.am



www.armconsumer.am